Նախագիծ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-504-06.03.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 105-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում աշխատանքի էական պայմանները չեն կարող փոփոխվել նվազ բարենպաստ պայմանների, բացառությամբ պաշտոնի անվանման և (կամ) տարակարգերի:»:

Հոդված 2. Օրենսգրքի 114-րդ հոդվածը 1-ին մասի 2.2-րդ կետից հանել «3-րդ,» թիվը, իսկ «8-10-րդ» թվերը փոխարինել «8-րդ և 10-րդ» թվերով:

Հոդված 3. Օրենսգրքի 171-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) հայրության արձակուրդը:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր 176.1-ին հոդվածով.

«**Հոդված 176.1. Հայրության արձակուրդը**

1. Երեխայի ծնվելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում նորածնի հոր ցանկությամբ տրամադրվում է 5 աշխատանքային օր տևողությամբ վճարովի արձակուրդ, որի յուրաքանչյուր օրվա համար գործատուն վճարում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափով:»:»:

Հոդված 5. **Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-504-06.03.2020-ԱՍ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ ԱԺ պատգամավոր Սրբուհի Գրիգորյան	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Պ-504-06.03.2020-ԱՍ-011/1)	Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. << 2. Հայրության արձակուրդի 2 օրերի համար վճարում է գործատուն, իսկ մնացած 3 օրերի արձակուրդի համար վարձու աշխատողին վճարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:>>	Չի ընդունվել	Չի ընդունվել